

ՄԵՐ ԶԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՄԵՐ ՈՒՋԵՑԵՔ ԱՍՏՈՒԾՄԷ, Ո՛Վ ՄՄՐԴԻԿ

«Հաւատքի վստահութիւնը ուզեցէ՛ք Աստուծմէ, ո՛վ մարդիկ: Թող այդ վստահութիւնը լեցնէ ձեր սրտերը, որովհետեւ ատիկա խաղաղութիւն կը բերէ մտքերուն: Մեր ուզեցէ՛ք Աստուծմէ, ո՛վ մարդիկ, որովհետեւ սերն է միայն, որ կեանքի մէջ կը զգացնէ, որ դուք լեցուն է՛ք, լեցուն այնքան՝ որ չէ՛ք կրնար չպարպուիլ, չէ՛ք կրնար ձեր գեղուն բաժակէն չհրամցնել եւ չխմցնել նաեւ ուրիշներուն: Աստուծմէ երջանկութիւն ուզեցէ՛ք, ո՛վ մարդիկ: Ա՛յն երջանկութիւնը սակայն, որ բարեգործութեամբ կու գայ: Ուզեցէ՛ք, որ Աստուած ձեր ֆայլերը բարեգործութեան ֆամբուն ուղղէ, եւ այն ատեն ձեր երջանկութիւնը ինքնին կու գայ՝ ձեր պարգեւելովը եւ ձեր բաշխելովը: Եթէ դուք չբաշխէ՛ք, չէ՛ք կրնար այդ ուրախութիւնը ունենալ» (Զարեհ Ա.բ. Ա.գնաւորեան):

Ի՞նչ կը նշանակէ խաչակնքել:

Խաչակնքել կը նշանակէ.

1. Վահանով պաշտպանուիլ չար ներգործութիւններու դէմ:
2. Յիշել մեր Փրկիչին Խաչին վրայ գահը, մարդկութեան ազատութեան (փրկութեան) համար:
3. Խաչակնքելով Աստուծոյ օգնութիւնն ու ողորմութիւնը կը խնդրենք, ո՛չ մեր բարի գործերուն ի պատասխան, այլ՝ խաչեալ Քրիստոսի գութին ապաւինելով:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՋԵՍ...

ԵԹԷ Կ՛ՈՒՋԵՍ ԳԻՏԱԿԱԼ ԹԷ ԱՍՏՈՒԾԱՊԱՇՏ ՍԱՐԴԸ ԻՆՉՊԻՍԻ ՎԱՏԱՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ, ԿԱՐԴԱՆՔ՝ Սաղմոս 11

Ես ՏԻՐՈՋ ապաւինեցայ. ի՞նչ-պէս ինձի կ'ըսէք. «Թռչունի պէս լեռ փախիր»: Որովհետեւ, ահա ամբարիշտները իրենց աղեղը կազմեցին եւ իրենց նետը լարին վրայ ամբացուցին, խաւարին մէջ հարուածելու համար սրտով ուղիղ մարդիկը: Եթէ մարդկային ընկերութեան հիմերը կործանած են, արդարը ի՞նչ կրնայ ընել:

ՏԵՐԸ իր սուրբ տաճարին մէջ է: ՏԻՐՈՋ աթոռը երկնքի մէջ է: Անիկա աչքէ չի հեռացներ տառապողները, իր ակնարկով կը կշռէ մարդիկը: ՏԵՐԸ կը քննէ արդարն ու ամբարիշտը, եւ կ'ատէ բռնութիւն սիրողը:

Անիկա ամբարիշտներուն վրայ կրակ ու ծծումբ պիտի տեղացնէ, եւ այրող խորշակը պիտի ըլլայ անոնց վերապահուած բաժինը, որովհետեւ ՏԵՐԸ արդար է, կը սիրէ արդար գործերը, եւ ուղիղ վարքով ապրող մարդիկը զայն երես առ երես պիտի տեսնեն:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak](#) [Նրազ թերթ](#)



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՍՐԷՂ ԽՍ ՂՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿՐԱԿԻ, 31 ՄԱՅԻՍ 2020

ԹԻԻ 22

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀԱՄԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Գործք 2.1-21

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 14.25-31

ՀՈԳԵԳԱԼՈՒՄՍ (ՊԵՆՏԵԿՈՍԷ)

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 14.25-31

Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի դրկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն կը թողո՞ւմ ձեզի. իմ խաղաղութիւնս է՝ որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախճաք: Լսեցէ՛ք ինչ որ ըսի ձեզի, թէ «*Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի*»: Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն չունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ, թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը, որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն:

Սիրելի Քրիստոսը ու պահել Անոր պատուիրանները երկու անբաժան ճշմարտութիւններ են մեր քրիստոնէական կեանքին մէջ: Եթէ կը սիրենք Յիսուս, անպայման կը հաւատանք Անոր Խօսքին ու հաւատարիմ կը մնանք անոր հոգիին: Երբեմն ալ, լսել Խօսքը, ճաշակել զայն, խորհրդածել անոր մասին՝ մեզ անպայման կ'առաջնորդէ սիրելու Քրիստոսը: Քրիստոսը կը սիրենք այն ատեն երբ մենք կը սկսինք ընդունիլ մեր նմանը իբրեւ եղբայր՝ իբրեւ սիրելի, այլ խօսքով երբ մեր նմանը սիրենք եւ սրտանց օգտակար դառնանք անոր՝ այն ատեն ճշմարտապէս սիրած կ'ըլլանք մեր երկնաւոր Հօր: Բոլորս ալ խաղաղութիւնը սիրող ենք եւ խաղաղութիւն կ'ուզենք: Այդ խաղաղութիւնը Քրիստոս նախքան երկինք համբառնալը թողուց մեզի: Կը մնայ մեր հաւատքով եւ Քրիստոսի ապաւինելով գտնել այդ խաղաղութիւնը մեր առաքելութեան ընդմէջէն:

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
2.1-21**

Երբ Պենտեկոստի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասնաբար մէկտեղուած էին: Յանկարծ սաստիկ հովի մը սուլոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք հրեղէն լեզուներ տեսան, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներ խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Այն օրը Երուսաղէմ քաղաքը լեցուեց էր բարեպաշտ հրեաներով, որոնք աշխարհի չորս կողմերէն եկած էին: Երբ այս ձայնը լսուեցաւ, մեծ բազմութիւն մը եկաւ խոնուեցաւ այնտեղ եւ բոլորը անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին թէ ինչպէս անոնք իրենցմէ իւրաքանչիւրին լեզուով կը խօսէին: Ամէնքն ալ սքանչացումով եւ զարմանքով կ'ըսէին իրարու. «Այս խօսողները բոլորն ալ գալիլիացիներ չե՞ն միթէ: Ի՞նչպէս կ'ըլլայ, որ մեր ծննդավայր երկիրներու լեզուներով կը խօսին, ինչպէս ասորացիներ կը լսենք: Զէ՞ որ ասա մեր մէջ կան պարթեւներ, մարեր, եւմացիներ, միջագետացիներ, հրեաներ, կապադովկիացիներ, պոնտացիներ, ասիականներ, փոնտացիներ եւ պամփիլիացիներ, եգիպտացիներ, Կիւրեանիայի շրջանէն լիպիացիներ, Հոռումէն եկած հրեայ եւ հրեութեան դարձած այցելուներ, կրեոացիներ եւ արաբացիներ: Եւ ասա բոլորս ալ մեր լեզուներով իրենցմէ կը լսենք Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին»:



Ապաշահար, անոնք զարմանքով կը հարցնէին իրարու. «Ի՞նչպէս կարելի է բացատրել ասիկա»: Իսկ ոմանք կատակելով կ'ըսէին. «Նոր գինիով գինովցած են»:

Այն ատեն Պետրոս տասնմէկ առաքելներուն հետ ոտքի ելաւ եւ բարձրաձայն սկսաւ անոնց խօսիլ. «Ո՛վ հրէաստանցիներ եւ դուք, որ հիմա Երուսաղէմ կը գտնուիք: Իրականութիւնը գիտնալու համար լսեցէ՛ք ինչ որ պիտի ըսեմ: Դուք կը կարծէք, թէ ասոնք գինով են, բայց այդպէս չէ, որովհետեւ աստուան ժամը ինն է դեռ: Մինչդեռ ասիկա կատարումն է Յովելի մարգարտութեան որ կ'ըսէ. "Այնուհետեւ երբ վերջին օրերը գան, կ'ըսէ Աստուած, - իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի, ձեր երիտասարդները տեսիլներ պիտի ունենան եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:

Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ ծառաներուս եւ աղախիներուս վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի:

Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ. աշխարհ արիւնով, կրակով ու թանձր ծուխով պիտի լեցուի, արեւը պիտի խաւարի, եւ լուսինը արիւնի գոյն պիտի առնէ, եւ ի վերջոյ պիտի հասնի Տիրոջ մեծ եւ անեղ օրը»:

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ
ՀՈԳԵԳԱԼՈՒՍ**



Քրիստոսի Յարութենէն 50 օր ետք, երբ Երուսաղէմի մէջ մեծ թիւով ժողովուրդ հաւաքուած էր Պենտեկոստի առթիւ, առաքելները Տիրոջ պատուէրին համաձայն Վերնատուն հաւաքուեցան: Անոնք մէկ սիրտ դարձած կ'աղօթէին սպասելով Ս. Հոգիին գալուստը, ինչպէս Յիսուս խոստացած էր: Յանկարծ սաստիկ հովի ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը: Յետոյ անոնք տեսան հրեղէն լեզուներ, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Ս. Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Առաքելները գորանալով սկսան քարոզել ու վկայել Յիսուսի մասին: Աշխարհի տարբեր ժողովուրդներ, որոնք Երուսաղէմ հաւաքուած էին անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին, թէ ինչպէս անոնցմէ իւրաքանչիւրը իրենց սեփական լեզուով կը խօսի: Պետրոս առաքելի ճառէն ետք 3000 հոգի դարձի եկան եւ մկրտուեցան Յիսուս Քրիստոսի անունով:

**ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ
ԽՐԱՏՆԵՐԸ**

Նուիրներու, Պատարագի եւ ողորմութիւն ընելու մասին

Աղբատներուն ընդունելութիւն ընելը այսքան օգտակար է ու անոնց աղօթքները Աստուծոյ մօտ են. «Երանելի է ան, որ կը խորհի աղքատին եւ չքաւորին մասին, Տէրը չար օրէն կը փրկէ զայն, երանելի կ'ընէ երկրի վրայ եւ թշնամիներուն ձեռքը չի մատներ զայն»: (Սաղմոս 41:1-3): Կարիքաւորները կերակրելու երջանկութիւնը այս է, ինչ որ Քրիստոս իրեն համար կատարուած կը նկատէ: Իսկ ի՞նչ պիտի շահիս, երբ ունեւորները խնճոյքի հրաւիրես եւ կամ ի՞նչ պիտի ըլլայ ատոր օգուտը: Անօթիներուն համար եղած ընդունելութիւնը օգտակար է, իսկ կուշտերուն համար եղածը՝ ոչ: Քրիստոս չըսաւ. «Յագեցածները կը շտապուիք» ու նաեւ չըսաւ «Խմելիք տուիք անոնց, որոնք գինով էին», այլ ըսաւ. «Տեսաք անոնք, որ ծարաւ էին եւ դուք անոնց ջուր տուիք խմելու. տեսաք մերկերը ու զանոնք հագցուցիք եւ օտարներուն այցելեցիք»: Նման գործերն են, որ արժանի պիտի ըլլան վարձատրութեան եւ երանութեան եւ ոչ թէ կուշտերուն եւ ունեւորներուն համար եղած կերուխումները, որովհետեւ ան որ աղքատը, կարօտեալը, օտարը, հիւանդը եւ անտունը կը կերակրէ, ոչ թէ մարդ մը, այլ՝ Քրիստոսն է որ կ'ընդունի, Քրիստոսն է որ կը սփոփէ, Քրիստոսն է որ կը մխիթարէ, Քրիստոսն է որ կը հանգչեցնէ եւ Քրիստոսն է, որ կը ծառայէ, քանզի անսուտ է Տէրունի խօսքը: